ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2026 թվականի N:243 - Ա ք. Գյումրի

ԼԻԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 26-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N:663-Ա որոշումը, հիմք ընդունելով Լիլյա Գասպարյանի 2026 թվականի հունիսի 30-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլյա Գասպարյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N:663-Ա որոշմամբ տեղափոխված 2024 թվականի ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 4-ը ներառյալ:

2. Լիլյա Գասպարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության գրադարանավար Արմինե Մելքոնյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է